ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/111, 08.10.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Վիոլա» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Նաիրիի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/21» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Լաբորատոր միկրոպլանշետային ընթերցող սարքի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Պարտավորեցնել «Նաիրիի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ **լ**աբորատոր միկրոպլանշետային ընթերցող սարքի ձեռքբերման նպատակով հայտարարած «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/21» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

«ՎԻՈԼԱ» ՍՊԸ
Արյան եւ Ախտորոշման Կենտրոն

«VIOLA» Company, Ltd.
Blood Center & Diagnostics

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան 1, ՀՀ ֆինանսների նախարարություն

Բողոք բերող անձ՝ «Վիոլա» ՍՊԸ-ը
(տնօրեն Ա.Մեժլումյան)
Հասցե՝ ՀՀ, 0040, Երեւան, Աճառյան փող. 2րդ նրբ, շենք 3
Հեռ. (+374) 10 629031, 629081
Ֆաքս. (+374) 10 629 083
էլ. հասցե. viola@arminco.com

Պատվիրատու՝ «Նաիրիի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Եղվարդ, Չարենցի 196
Հեռ՝ (+374) 10 244 974
Էլ. փոստ՝ protender.itender@gmail.com

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«Նաիրիի Բժշկական Կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ լաբորատոր միկրոպլանշետային ընթերցող սարքի ձեռքբերման նպատակով հայտարարված ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/21 ծածկագրով գնանշման հարցում»

ԲՈՂՈՔ

- ***Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.***

✓ «Նաիրիի Բժշկական Կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար անհրաժեշտ լաբորատոր միկրոպլանշետային ընթերցող սարքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/21 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

✓ Ընթացակարգի հրավերը www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է, **ուրբաթ օրը**՝ 02.10.2020թ., ժամը 17:07:

✓ Ընթացակարգով հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել հրավերի վերաբերյալ հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը ժամը 11:00-ը, այն է՝ **09.10.2020թ. ժամը 11:00** (ըստ www.gnumner.am՝ հրապարակված է 2020-10-02 17:07:00-ից մինչեւ 2020-10-09 11:00:00 ժամը ներառյալ):

✓ Ընթացակարգի հրավերը armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցմամբ գրանցված մասնակիցներին ուղարկվել է **ուրբաթ օրը**՝ 02.10.2020թ., **ժամը 19:22-ին** (արտատպումը կցվում է):

✓ Ընթացակարգի հրավերի 3.1 կետի համաձայն՝ Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում: **Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց *առնվազն հինգ օրացուցային օր առաջ* համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու**

հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

✓ Ընթացակարգի հրավերի 3.2 կետի համաձայն՝ հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը պարզաբանումը տրամադրելու օրը հրապարակվում է համակարգում և www.procurement.am հասցեով գործող տեղեկագրի (այսուհետ՝ տեղեկագիր) «Գնումների հայտարարություններ» բաժնի «Հրավերների պարզաբանումների վերաբերյալ հայտարարություններ» ենթաբաժնում՝ առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

✓ Ընթացակարգի հրավերի 3.3-րդ կետի համաձայն՝ **պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ**, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է սույն հրավերի բովանդակության շրջանակից կամ եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների տեխնիկական բնութագրերի՝ սույն հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

✓ Հրվերը հրապարակելու հաջորդ աշխատանքային օրը, երկուշաբթի՝ 05.10.2020թ., «Վիոլա» ՍՊԸ-ն փորձել է պարզաբանում պահանջել Պատվիրատուից՝ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի մասով, սակայն ժամկետի պատճառով armeps համակարգի համապատասխան էջը այլևս ակտիվ չի եղել (armeps համակարգից արտատպումը կցվում է):

✓ Ընթացակարգի հրավերով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Լաբորատոր միկրոպլանշետային ընթերցող սարք՝ ներկառուցված տպիչով և կարգավորման էկրանով

- Ռեագենտների բաց համակարգ
- 7 դյույմ գունավոր LCD սենսորային էկրան՝ ներկառուցված տպող սարքով
- Մեկ պլանշետի վրա տարբեր պարամետրերի /թեսթերի/ չափման հնարավորությունը՝ նվազագույնը 12 պարամետր:
- Ավտոմատ ինքնաստուգում, երբ հոսանքը միացված է
- Random (կամայական) դրական և բացասական ստուգիչների (Control) տեղադրում
- Հոսանքի անջատման դեպքում ավտոմատ կերպով տվյալների պահպանում
- Ալիքի երկարությունը՝ 4 ստանդարտ ֆիլտրեր 405նմ, 450 նմ, 492 նմ, 630 նմ, և ևս 3 օպտիկական ֆիլտրեր:
- Հաշվարկային մեթոդը՝ ABS, Cut-off, Multi-percent
- Չափման մեթոդներ՝ End-point, երկկետային, Kinetic
- Միկրոպլանշետի տեսակը՝ ստանդարտ 96-ակոսանի և 48-ակոսանի և այլ տեսակի միկրոպլանշետ և ստրիպ
- Թափահարման ժամանակի և արագության կարգավորման հնարավորություն
- Ներկառուցված ջերմային տպիչ (պարտադիր պայման) և արտաքին տպիչի միացման հնարավորություն
- Ինտերֆեյս՝ USB port, LAN, RS-232, մկնիկի միացման պորտեր
- Օպտիկական խտության չափման միջակայքը՝ 0-4.5 OD
- Օպտիկական խտության չափման զգայունությունը՝ 0.0001 OD հաշվարկային
- Օպտիկական համակարգի տեսակը՝ նվազագույնը 8 ուղիանի օպտիկա, խորշիկների դիրքի ավտոմատ կենտրոնացում օպտիկայի ուղիների նկատմամբ:
- Լամպը՝ վոլֆրամ-հալոգենային 6Վ, 200Վտ, անգործության ժամանակ լամպի ավտոմատ խնայողության ֆունկցիայով:
- Չափման ֆիլտրերի կրիչը՝ նվազագույը 8 տեղանի:
- Չափումների ֆոնային մակարդակի (blank) ընտրման հնարավորությունները՝ մեկ խորշիկի արժեքով, մի քանի խորշիկների միջին արժեքով, ողջ շարքի կամ սյունակի խորշիկների միջին արժեքով:

- Ներդրված խառնիչ, թափահարման արագությունը՝ երեք ռեժիմներով՝ արագ, միջին, դանդաղ: Խառնիչի թափահարման տևողությունը՝ կառավարվող:
- Ներդրված համակարգիչ՝ միկրոպրոցեսորային կառավարում և հաշվարկում:
- Չջնջվող հիշողություն՝ առնվազն 10000 չափման արդյունք:
- Չափման արդյունքների պահպանման և տպման հնարավորություն:
- Ներդրված ջերմային տպիչ՝
- Սարքի կառավարումը հպումային էկրանի և մկնիկի միջոցով:
- Էկրանը՝ հեղուկբյուրեղային գունավոր հպումային, նվազագույնը 6-8 դյույմ անկյունագծով, ամբողջ պլանշետի չափման արդյունքների և կալիբրացիայի կորի ցուցադրման հնարավորությամբ
- Էլեկտրասնուցումը՝ 220Վ լարում. 100Վ-240Վ փոփոխական լարման պայմաններում:
- Մատակարարման հավաքակազմը՝ ֆոտոմետր, միացման լարով, ներկառուցված ջերմային պտիչ՝ միացման լարով /ջերմային տպիչի թուղթ-2 գլանակ/, էկրանի հպման մատիտ-1 հատ, մկնիկ – 1 հատ, պահեստային լամպ՝ վոլֆրամ-հալոգենային 6Վ, 200Վտ – 1 հատ, օգտագործողի ձեռնարկ:
- CE, ISO-9001, ISO-13485 հավաստագրերի առկայություն:
- Նվազագույնը 2 տարվա երաշխիքային սպասարկում տեղադրումից և ուսուցումից հետո:
- Ֆատոմետրի արտադրության տարեթիվը – 2020թ
- Մատակարարման ժամկետը՝ առավելագույը 60 օր:

- **<u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.</u>**

ա) «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով ***մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:***

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ***ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:***

Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝

1. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց **առնվազն հինգ օրացուցային օր առաջ** գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

2. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, իսկ փակ մրցույթի դեպքում հարցման և պարզաբանումների բովանդակության մասին պարզաբանումը տրամադրվում է հրավեր ստացած մասնակիցներին:

3. **Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ**, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Ընթացակարգի հրավերի 3.1 կետի համաձայն՝ **մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում:**

Ընթացակարգի հրավերի 3.3-րդ կետի համաձայն՝ **պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ**...:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ հետևյալ կարևոր փաստերը.

Նախ և առաջ, Ընթացակարգի հրավերը www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է **ուրբաթ օրը՝** 02.10.2020թ., ժամը 17:07: Այնուհետև, Ընթացակարգի հրավերը armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցմամբ գրանցված մասնակիցներին ուղարկվել է նույն ուրբաթ օրը՝ 02.10.2020թ., **ժամը 19:22:**

Փաստորեն, հնարավոր մասնակիցներին տվյալ Ընթացակարգի հրավերը ուղարկվել է ուրբաթ օրը, աշխատանքային օրվա վերջին, ավելին, աշխատանքային ժամից հետո, և համապատասխանաբար, մասնակիցները հնարավորություն ունեին ծանոթանալու Ընթացակարգի հրավերին, և ներկայացնել պարզաբանում ստանալու խնդրանք միայն հաջորդ աշխատանքային օրը, այսինքն երկուշաբթի, 05.10.2020թ.:

Մասնավորապես, «Վիոլա» ՍՊԸ-ն պատրաստել էր հետևյալ բովանդակությամբ պարզաբանում ստանալու խնդրանք, որը էական նշանակություն ուներ հրավերի տեխնիկական բնութագիրը լիարժեք ընկալելու և ընթացակարգին մասնակցության հարցը որոշելու համար.

«Սարքի բնութագրում պահանջվում է.

1. **«Ալիքի երկարություն՝ 4 ստանդարդ ֆիլտրեր 405նմ, 450նմ, 492նմ, 630նմ, <u>կա 3 օպտիկական ֆիլտրեր»:</u>**

Խնդրում ենք հստակեցնել, արդյոք վերոնշյալ բնութագիրը պահանջում է թվով 7 օպտիկական տարբեր ֆիլտրերի առկայություն (4+3), թե պահանջում է 4 ստանդարտ ֆիլտրերի առկայություն և լրացուցիչ 3 ֆիլտրերի տեղադրման հնարավորություն: Բնութագրի այս պահանջը անհասկանալի է նաև այն պատճառով, որ չեն հստակեցված լրացուցիչ 3 ֆիլտրերի ալիքների երկարությունները:

Սարքի բնութագրում պահանջվում է.

2. «Ներդրված ջերմային տպիչ»:

Խնդրում ենք հաստատել, որ բնութագրի վերոնշյալ պահանջը չի բացառում, որ.

ներդրված ջերմային տպիչը փոխարինվի առանձին լազերային տպիչով և մատակարարման հավաքակազմում լրացուցիչ ներառվի լազերային տպիչ (A4 ֆորմատ)՝ սարքին միացնելու լարի հետ միասին, ինչը հնարավորություն կտա իրականացնել չափման արդյունքների տարատեսակ հաշվետվությունների տպումը A4 ձևաչափի ստանդարտ թղթի վրա»:

Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտեր ներկայացնելու համար սահմանվել էր ընդամենը 7 օրացուցային օր (մինչև 09.10.2020թ.), հրավերը հրապարակվել էր ուրբաթ օրը՝ 02.10.2020թ., իսկ հրավերի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց **առնվազն հինգ օրացուցային օր առաջ** գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում, ապա նման պարագայում բոլոր մասնակիցները, այդ թվում նաև «Վիոլա» ՍՊԸ-ն, զրկվել են հնարավորությունից պահանջելու պարզաբանում այն պարզ պատճառով, որ հրավերը հրապարակելուց հետո հենց հաջորդ աշխատանքային օրից սկսած սահմանված թույլատրելի ժամկետը դարձել է լրացած:

Գտնում ենք, որ պատվիրատուն նման ժամկետում հրապարակելով Ընթացակարգի հրավերը՝ մասնակիցներին զրկել է Օրենքի 29-րդ հոդվածով և Հրավերի 3.1 կետով երաշխավորված պարզաբանում պահանջելու իրավունքից:

բ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. *Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:* Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) **ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:**

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների **հստակ նկարագրությունը**՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. **Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:**

Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը կազմվել է Օրենքի 13-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, մասնավորապես, լաբորատոր միկրոպլանշետային ընթերցող սարքի համար սահմանվել են հետևյալ պարամետրերը.

- Ալիքի երկարությունը՝ 4 ստանդարտ ֆիլտրեր 405նմ, 450 նմ, 492 նմ, 630 նմ, և <u>**ևս 3 օպտիկական ֆիլտրեր:**</u>
- <u>**Ներկառուցված ջերմային տպիչ**</u> (պարտադիր պայման) և արտաքին տպիչի միացման հնարավորություն

Այս պարամետրերի առումով խնդրում ենք նկատի ունենալ հետևյալը.

1. Ըստ հրավերի՝ **«Ալիքի երկարություն՝ 4 ստանդարդ ֆիլտրեր 405նմ, 450նմ, 492նմ, 630նմ, <u>ևս 3 օպտիկական ֆիլտրեր</u>»:**

Վերոհիշյալ պահանջից անհասկանալի է, թե արդյոք վերոնշյալ բնութագիրը պահանջում է թվով 7 օպտիկական տարբեր ֆիլտրերի առկայություն (4+3), թե պահանջում է 4 ստանդարտ ֆիլտրերի առկայություն և լրացուցիչ 3 ֆիլտրերի ***տեղադրման*** հնարավորություն: Բնութագրի այս պահանջը անհասկանալի է նաև այն պատճառով, որ չեն հստակեցված լրացուցիչ 3 ֆիլտրերի ալիքների երկարությունները: Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ 4 ստանդարդ ֆիլտրերի համար հստակ սահմանվել են երկարությունները՝ 405նմ, 450նմ, 492նմ, 630նմ, մինչդեռ պահանջված 3 ֆիլտրերի մասով որևէ երկարություն նշված չի, մինչդեռ այն հանդիսանում է ֆիլտրի հիմնական բնութագրիչը:

2. Ըստ հրավերի՝ **«Ներդրված ջերմային տպիչ»:**

Պահանջի մասով խնդրում ենք նկատի ունենալ, որ բնութագրի վերոնշյալ պահանջը ըստ ՍՊԸ-ի՝ խտրական է, և, ըստ էության, նման սարքի համար չպետք է բացառվի նաև **ներդրված ջերմային տպիչը փոխարինման հնարավորությունը առանձին լազերային տպիչով** և հնարավորություն մատակարարման հավաքակազմում լրացուցիչ ներառելու լազերային տպիչ (A4 ֆորմատ)՝ սարքին միացնելու լարի հետ միասին, ինչը հնարավորություն կտա իրականացնել չափման արդյունքների տարատեսակ հաշվետվությունների տպումը A4 ձևաչափի ստանդարտ թղթի վրա և հակառակը: Այսինքն սարքը կարող է ունենալ թե՛ ներդրված ջերմային տպիչ, և թե՛ **ներդրված ջերմային տպիչը**

փոխարինման հնարավորությունը առանձին առկա և սարքին միացված լազերային տպիչով:

Օրինակ, Երևանի քաղաքապետարի կողմից հայտարարված բիոքիմիական անալիզատորի ձեռքբերման մրցույթի շրջանակներում պահանջվել է այնպիսի սարք, որը պետք է ունենա USB port, որը հնարավորություն կտա այդ սարքին միացնել լազերային տպիչ: Տվյալ մրցույթի շրջանակներում «Վիոլա» ՍՊԸ-ն պարզաբանում պահանջեց Երևանի քաղաքապետարանից (պարզաբանման տեքստի արտատպումը կցվում է), թե լազերային տպիչ միացնելու փոխարեն կարող է արդյոք սարքը ունենալ ներդրված ջերմային տպիչ, ինչը ընդունվեց Երևանի քաղաքապետարանի կողմից, և ներդրված ջերմային տպիչը համարժեք համարվեց կցված լազերային տպիչին, որի արդյունքում «Վիոլա» ՍՊԸ-ն որոշում կայացրեց մասնակցել Երևանի քաղաքապետարանի կազմակերպված մրցույթին:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ «Նաիրիի Բժշկական Կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ լաբորատոր միկրոպլանշետային ընթերցող սարքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/21 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի հրավերը կազմել է Օրենքի 13-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, իսկ Հրավերի հրապարակման ժամկետը զրկել մասնակիցներին պարզանաբում պահանջելու հնարավորությունից, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի խախտմանը, ինչպես նաև զրկել մասնակիցներին Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված գնման գործընթացին մասնակցելու իրավունքի արդյունավետ իրականացման հնարավորությունից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է **մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:**

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, **ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը**, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:

*Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ սույն ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետն է **09.10.2020թ.**, ուստի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին*

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Պարտավորեցնել «Նաիրիի Բժշկական Կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ լաբորատոր միկրոպլանշետային ընթերցող սարքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/21 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «ՆԲԿ-ԳՀԱՊՁԲ-20/21 ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Կից ներկայացվում է.

- Պետական տուրքի վճարման անդորրագիրը:
- «Վիոլա» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Մեժլումյանի անձնագրի պատճեն:
- Արտատպում էլ. փոստից Ընթացակարգի հրավերը armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցմամբ գրանցված մասնակիցներին ուղարկելու վերաբերյալ:
- Արտատպում armeps համակարգից՝ պարզաբանում պահանջելու էջից:
- Երևանի քաղաքապետարին ուղղված պարզաբանումների և դրանց պատասխանների արտատպումը:

Առդիր՝ 8 թերթ:

Հարգանքով՝
«Վիոլա» ՍՊԸ տնօրեն ***Արմեն Մեժլումյան***

08.10.2020թ.